ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Երկկոմպլեկ դասարաններում խառը համգործակցության խմբային մեթոդով աշակերտներիներգրավածություն և մոտիվացիա

.....

Հետազոտող ուսուցիչ՝ - Հասմիկ Սաֆարյան

անուն, ազգանուն

Տալվորիկի հիմնական դպրոց

.....

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ռուզաննա Աղաջանյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 5
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 17
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության համակարգը մշտապես գործել ու զարգացել է կոնկրետ հասարակական միջավայրում: Այդ տեսանկյունից շատ կարևոր է այն հանգամանքը, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին: Այսօր դասապրոցեսի եւ արտաքին աշխարհի առնչությունները ավելի անմիջական են, ինչը նշանակում է, որ անհնար է արդյունավետ դասավանդել առանց հասկանալու և հաշվի առնելու, թե ինչպես է փոխվում աշխարհը:

Հետազոտությունը իրականացվում է հիմնական դպրոցի երկկոմպլեկտ դասարաններում: Երկկոմպլեկտ դասարաններում դաս վարելով հանդիպել եմ բազում խնդիրների՝ աշակերտները շատ դժվարությամբ են մոտիվացվում և ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով՝ ես որոշեցի հետազոտության համար վերցնել այնպիսի թեմա, որը ծանոթ է և՛ յոթերորդ, և՛ իններորդ դասարանի աշակերտներին: Չնայած որ երկկոմպլեկտ դասարաններում դասավանդելիս առաջ են գալիս խնդիրներ' կապված դասարաններին տրամադրվող նյութի և տարիքային տարբերության հետ, դա ունի իր դրական կողմը՝ ավագ դասարանի իմացական գիտելիքների աջակցության տեսանկյունից:

Ուսուցման ընթացքում համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը կնպաստի դասարանում նոր, համագործակցային միջավայրի ձևավորմանը, կօգնի հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ կստեղծի ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև կբարելավվի խմբային աշխատանքը: Խմբային աշխատանքի ժամանակ ի հայտ կգա ներգրավվածությունը, որն էլ կապահովի աշակերտների արդյունավետ մասնակցությունը դասին: Ներգրավվածությունը արդեն իսկ կարող է խթան հանդիսանալ մոտիվացիոն գործընթացին: Երկկոմպլեկտ դասարաններում աշխատելիս ի հայտ են գալիս հետևյալ հմտությունները.

- գիտելիքի փոխանակում

- խմբով աշխատելու կարողություն
- վարքային դրսևորում

Աշակերտները համագործակցային միջավայրում կկարողանան կառուցել իրենց հմտությունները՝ խոսելու, բացատրելու, բանակցելու, հարց ու պատասխանի միջոցով։

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել երկկոմպլետ դասարաններում խառը համագործակցության խմբային մեթոդով աշակերտների ներգրավածության արդյունավետությունը և մոտիվացինա։

Հետազոտական աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մասնագիտական և մեթոդական գրականություն
- վեր հանել խառը համագործակցության խմբային մեթոդի առանձնահատկությունները
- Ուսումնասիրել մոտիվացիայի դերը և ազդեցությունը, բարձրացման ուղիները

Հետազոտական աշխատանքը բաղկացած է 21 էջից, նախաբանից, գրականության ակնարկից, գործնական համտեքստից, եզրահանգումներից և օգտագործված գրականության ցանկից։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Վերոնշյալ խնդրների վերաբերյալ հետազոտություն կատարելիս օգտվել ենք արժանահավատ և ստուգված աղբյուրներից:

Ըստ Արզումանյան Ս-ի՝ որպեսզի աշակերտի մեջ դրական վերաբերմունք և արժևորման բարձր մակարդակ ձևավորվի կրթության կամ առանձին առարկայի նկատմամբ, անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչների դասավանդման մեթոդներն ու մոտեցումները նպաստեն դրան: Արդյո՞ք աշակերտները ակտիվորեն ներգրավված են դասապրոցեսին թե գտնվում են պասիվ լսողի դիրքում: Որքան ակտիվ է աշակերտը ներգրավված դասապրոցեսին, այնքան ավելի բարձր են նրա ձեռքբերումները: Օրինակ՝ մաթեմատիկայում այդ ներգրավվածությունը ենթադրում է խնդրահարույց ուսուցման տարրերի կիրառում և ինտերակտիվություն: Բնագիտական առարկաներում առավել արդյունավետ է առարկայական գործողություններ իրականացնելը՝ աշխատել նյութերի, իրական երկրաչափական պատկերների հետ: Աշակերտները ավելի ներգրավված և հետաքրքրված են աշակերտակենտրոն ուսուցման մեջ: Հետևաբար արդյունավետ ուսուցչական գործունեությունը ենթադրում է նպաստավոր դասարանային միջավայրի ստեղծում, նպատակների հստակ սահմանում և ուղղորդում: Սակայն դասավանդման մոտեցումներից զատ կարևոր է ուսուցչի սկզբունքային դիրքորոշումը աշակերտների սովորելու կարողությունների նկատմամբ: Ուսուցիչը պետք է հավատա և հավատացնի աշակերտին, որ նա կարող է սովորել և լավ արդյունքներ գրանցել: Որպեսզի կրթական գործունեությունը լինի արդյունավետ և հաջող, պետք է իրականացնել բազմաթիվ և բազմապիսի բարեփոխումներ:[ԱրզումանյանՍ.https://library.anau.am/images/stories/grqer/hasarak/mankavarjutyun.pdf [6],

Ըստ Ամիրջանյան Ա.- ի բոլոր գործընթացները և փոփոխությունները, որոնք անց են կացվում կրթական մակարդակում, կարող են համարվել արդյունավետ, եթե նրանք

բարձրացնում են աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը և առաջադիմությունը: Ուսումնական գործընթացը չպետք է դիտել միայն դասավանդման և ուսման մեխանիկական գումար, քանի որ այդ կերպ այն միայն ձանձրույթ կպատճառեր: [Ամիրջանյան ՅՈՒ. Ա., Մանկավարժություն (Ուսումնական ձեռնարկ), Երևան 2005]

Ըստ Պիտերի ներգրավվածության ուսումնասիրության համատեքստում շատ կարևոր տեղ է զբաղեցնում մոտիվացիայի տեսությունը: Ինչպես նշում է Ե.Պ.Իլյինը, «հենց մոտիվների, դրդապատճառների առկայությունը աշակերտների մոտ ուսման հանդեպ նպաստում է նրանց ներգրավվածության բարձր մակարդակի ապահովմանը»:(Ильин Е.П., Мотивация и мотивы, С-Пб.: Питер, 2000, էջ 89-90):

Ըստ ամերիկացի հոգեբան Ռիչարդ Ռայանի, «մարդն իր էությամբ հետաքրքրասեր էակ է, նրա մոտ միշտ առկա է մեծ հետաքրքրություն ճանաչման և ուսուցման հանդեպ, ցանկություն՝ հասկանալու շրջապատող իրականաությունը, սովորույթները և արժեքները»: (Ричард М. Райан, Теория самодетерминации, Нью-Йорк, 2017, էջ 18):

Էդուրադ Կաբուրեն նշում է որ՝ աշակերտների ներգրավվածությունը դպրոցի կյանքի բոլոր մակարդակներում (կանոնակարգեր, տոնակատարություններ, այլ միջոցառումներ, համատեղ նախագծեր) հետզհետե կստեղծի դպրոցին պատկանելու ավելի մեծ զգացողություն: Այս զգացումը դառնում է կատալիզատոր՝աշակերտներին ավելի շատ մոտիվացնելու դառնալ փոփոխության առաջամարտիկներ:

https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus/highlights/pupils-can-and-should-be-age.htm

Ըստ Յոզեֆ Դոգնալի մոտիվացիան ցանկացած ինքնուրույն գործունեության հիմքն է: Մոտիվացիա նշանակում է մարդու կողմից ներդնել իր ռեսուրսները, ինչպիսիք են էներգիան, ժամանակը, գիտելիքը, տաղանդը, կամքը և այլն ցանկալի նպատակին հասնելու համար: Կասկած չկա, որ մոտիվացիան արդյունավետ ուսուցման/ուսումնառության գործընթացի հիմնական պայմանն է, և այն վերաբերում

է համալսարանում կամ դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներին: [https://elensanti.ru/hy/training/sovremennye-problemy-nauki-i-obrazovaniya-motivaciyastudentov-k-obucheniyu-i-ee/]

Հաթթիի (2009 թ.) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշակերտի ուսումնառության վրա ամենամեծ ազդեցությունը գործում է աշակերտի կողմից սեփական ուսման և սեփական գնահատականների մասին ինքնազեկուցման կարողությունը: Փոքր խմբերով ուսուցման ծրագրով փորձ է արվում աշակերտներին հետևող մասնագետների միջոցով առաջ մղել այս համոզմունքը՝ ըստ որի, անհրաժեշտ է պահանջել, որպեսզի աշակերտներն իրենք զեկուցեն իրենց ընթացիկ ուսումնական մակարդակի մասին և նախանշեն ուսման մեջ առկա իրենց թերացումները, որպեսզի ուսուցիչն ու աշակերտը կարողանան մշակել համապատասխան միջամտություն՝ այդ թերացումը վերացնելու համար: [https://oflschools.org/wpcontent/uploads/2015/06/705161_OFL_FinalMasterPlanOFL_AR_Final.pdf]

Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը այն միջոցն է, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների, կարողությունների, բնավորության առանձնահատկությունների և տարբերությունների նկատմամբ: Համագործակցային ուսուցումը փորձում է լուծել նաև սովորողների հնարավորինս համաչափ զարգացման խնդիրը (մասնավորապես, համագործակցային ուսուցումը խրախուսում է միմյանց օգնելու, աջակցելու որակները), ինչը շատ կարևոր է ժողովրդավարական հասարակությունում մեծ վտանգներ պարունակող բևեռացումից խուսափելու առումով:

Համագործակցային ուսուցման տեսության մեջ ընդունված է, որ սոցիալական հմտությունները խմբային արդյունավետ աշխատանքի հիմքն են: Երկխոսությունը,

հաղորդակցումը, հանդուրժողականությունը, աջակցությունը, օգնություն հայցելը, օգնություն տրամադրելը սոցիալական այն հմտություններն են, որոնք ապահովում են մարդկանց համակեցությունը և համագործակցությունը:

Որոնք ե՞ն համագործակցային ուսուցման սոցիալական արդյունքները

Համագործակցային ուսուցման կարևորագույն հետևանքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն են, քանի որ անհատականությունը «ձևավորվում է մարդկանց հետ շփման արդյունքում: Մարդկանց հետ փոխառնչվելու արդյունքում, մենք ավելի լավ ենք հասկանում ինքներս մեզ»: Այն անհատները, որոնց ներանձնային և միջանձնային հմտությունները զարգացած չեն, թյուր փոխհարաբերություններ ունեն շրջապատի հետ և հակված են իրենց մասին կազմել ոչ ճիշտ ու թերի կարծիք:

Դրական ինքնագնահատական ունեցող մարդն ավելի հեշտ է համագործակցում՝ ընդունելով խմբի բոլոր անդամների ներդրումները: Այդպիսի մարդիկ առաջադիմում են նաև ակադեմիական նվաճումների առումով:

Կյանքի որակը համագործակցային ուսուցման մեկ այլ դրական արդյունք է, քանի որ բոլոր մարդիկ էլ իրենց կյանքում կարիք ունեն արդյունավետ փոխհարաբերությունների:

Արդյունավետ փոխհարաբերվել կարողանալու համար էական են իրական ինքնագնահատականը, սեփական և ուրիշների զգացմունքներն ու դրանց դրսևորումները հասկանալը, դիտարկումներ կատարելը, արդյունավետ հաղորդակցվելը և համագործակցել կարողանալը: Այս ամենը բերում է ուրիշների կարծիքը լսելուն և հարգելուն, տարաձայնությունները խաղաղ կարգավորել կարողանալուն, փոխօգնության:

Համագործակցային ուսուցման ևս մեկ հետևանք է սթրեսի հաղթահարման ունակությունը: Աջակցող փոխհարաբերությունների դեպքում նվազում է սթրեսային իրավիճակների թիվը և ծանրությունը, պակասում է տագնապը: Նման փոխհարաբերությունները օգնում են անհատներին հաղթահարել սթրեսը՝ հոգատար

վերաբերմունքի, սթրեսային իրավիճակների մասին տեղեկությունների տրամադրման, և հետադարձ կապի միջոցով:

Դրական և աջակցող փոխհարաբերությունները նպաստավոր են նաև ֆիզիկական առողջության համար: Փորձը ցույց է տվել, որ բարձրորակ փոխհարաբերությունները փոխկապված են երկարակեցության և հիվանդությունների ու վնասվածքների արագ ապաքինման հետ:

Համագործակցային ուսուցումը միտված է նաև անձի հակումների բացահայտմանը և մասնագիտական կողմնորոշմանը, ինչն էլ նպաստում է սիրված աշխատանք գտնելուն, դրա արդյունավետությանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելուն, աշխատանքային խնդիրները լուծելուն, մասնագիտական հաջողություններին:

Համագործակցային ուսուցման կրթական առավելությունները

Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների եւ հետազոտությունների վրա։ Ըստ Ջոնսոնների հաշվարկի, 1898-1989թթ ընթացքում անցկացվել է ավելի քան 550 համեմատական հետազոտություն համագործակցային, անհատական եւ մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով։ Այդ հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում, բոլոր տնտեսական, տարիքային, ազգային միջավայրերում։ Հետազոտությունների հիման վրա Ջոնսոնները և Հոլուբեկը առանձնացնում են երեք արդյունք.. «Համագործակցային ուսուցման արդյունքը ա. բարձր առաջադիմությունն է և արդյունավետությունը, բ. ավելի աջակցող եւ նվիրված հարաբերությունները եւ գ. հոգեբանական առողջության, բանիմացության եւ ինքնարժեւորման ավելի բարձր աստիճանը»։

Կրթական բարեփոխումների հայտնի մասնագետ Փիթեր Սինգեն խոսելով արդյունաբերական համակարգի (այսինքն՝ նախորդ) դպրոցի մասին, ի թիվս բազմաթիվ առանձնահատկությունների նշում է նաեւ այն, որ այդ դպրոցում

ուսուցումը կենտրոնացած է միայն ուղեղի վրա և ենթադրվում է, որ բոլոր աշակերտները սովորում են նույն ձեւով: «…ավանդական դասարանը հիմնվում է այն ենթադրության վրա, որ ուսուցումը միայն ինտելեկտուալ գործընթաց է: Միայն ուղեղ է պահանջվում, իսկ մարմնի մնացած մասերը դասարանում պետք չեն: Սրա արդյունքը ուսուցման պասիվ միջավայրն է» , նշում է Սինգեն: Համագործակցային ուսուցումը ամենևին չթերագնահատելով ինտելեկտի դերն ուսուցման գործընթացում, կարեւորում է նաեւ սոցիալական հմտությունները, զգայական աշխարհը, շարժունակության խնդիրը:

Համագործակցային ուսուցումը փորձում է հաղթահարել նաեւ Սինգեի նշած մեկ այլ մոլորություն, որի համաձայն բոլոր աշակերտները կարող են սովորել միևնույն ձեւով: Թերեւս դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ավանդական դասարանում դասախոսությունը վճռորոշ դեր ունի: Համագործակցային ուսուցման կազմակերպումը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել իրենց էությանը համապատասխան ձեւով, ընդհանուր նպատակի իրագործման համար ներդնել իրենց առավելությունները՝ ստանալով նաեւ դասընկերների աջակցությունը:

Համագործակցային ուսուցումը ունի նաեւ հետևյալ հիմնարար առավելությունները.

Նախ, այն մղում է աշակերտներին ավելի լավ սովորելու: Բոլոր աշակերտների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որում նրանք կարողանում են արտահայտել իրենց ուժեղ կողմերը: Որոշ մասնագետներ մտահոգություն են հայտնում, որ համագործակցային ուսուցման պարագայում դասարաններում ընդունակ աշակերտները պարտավորված են մշտապես սովորեցնելու մյուսներին, ինչի պատճառով նրանց առաջընթացը դանդաղում է: Սակայն այս կարծիքը ընդունելի չէ, քանի որ, նախ, մարդը ամենաշատը սովորում է սովորեցնելիս: Այսինքն, մյուսներին սովորեցնելով ընդունակ աշակերտը ավելի լավ է սովորում: Երկրորդ, ակադեմիական գիտելիքներից զատ դպրոցի համար պակաս կարևոր չեն տարբեր կարողություններ ու բնավորության գծեր ունեցող աշակերտների հետ աշխատելու

հմտությունները: Այս ճանապարհով է, որ դպրոցը դառնում է հասարակության մոդելը:

Երկրորդ, այն խրախուսում է ուսուցիչների համագործակցությունը: Հայաստանում, ավանդաբար, ուսուցիչները սովոր են միայնակ աշխատելու, ինչն արդյունավետ չէ: Չեն կիրառվում դասընթացներն ու դասերը համատեղ պլանավորելու, միջառարկայական ընդհանրությունները արդյունավետ օգտագործելու աշխատառճը: Համագործակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը, այլև՝ ուսուցիչ-ուսուցիչ համագործակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները շատ ավելի հեշտ են հարմարվում համագործակցային աշխատառճին, քան ուսուցիչները: Մինչդեռ համագործակցային ուսուցման գաղափարն անավարտ է առանց ուսուցիչների համագործակցային աշխատառճի: «Ուսուցման շրջանները» գրքում Ջոնսոնները եւ Հոլոբեկը գրում են «Ուսուցման մեթոդների փոփոխությունը ավելի հեշտ է ընթանում, երբ դրանք համահունչ (այլ ոչ հակադիր) են դպրոցի կազմակերպական կառուցվածքին: Որակյալ ուսուցում ապահովելու համար դպրոցները պետք է … մրցակցային, անհատապաշտական կազմակերպական կառուցվածքից անցնեն համագործակցային, թիմային կառուցվածքին, որը կոչվում է «համագործակցային դպրոց»» : Ուսուցման արդյունավետությունը շոշափելիորեն բարձրանում է, երբ ուսուցչական կազմը գործում է որպես թիմ: Ի վերջո, ցանկացած հաստատություն իր աշխատակիցների մտածելակերպի եւ աշխատառճի արդյունքն է:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԲԵՐԸ

«Այն ինչ այսօր երեխաները կարող են անել միասին,

վաղը նրանք դա կանեն միայնակ»

Լև Վիգոտսկի

Համագործակցային ուսուցումը որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարանում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը (համագործակցային ուսուցման մեթոդներց շատերը սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը դիտարկում են որպես ուսուցման արդյունավետությունը խթանելու միջոց),
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, արդի մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ:

Ավելին, հենց այդ տարրերն են, որ պետք է ապահովեն համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում: Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների հիմնականում հինգն են.

- դրական փոխկախվածություն,

- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի (սոցիալական և համագործակցային) հմտություններ,
- խմբային գործընթաց/մշակում:

Ուսուցման ընթացքում համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է ռեֆլեքսիան և բարելավում է խմբային աշխատանքը:



Համագործակցային ուսու[illegible]ակցային ուսուցման տարրերը

[illegible]անընդհատ օգտագործման արդյունքում խմբերը կարող են հ[illegible]թյան բարձր մակարդակի:

Այս գլխում մանրամասն կքննարկենք համագործակցային ուսուցման հիմնական տարրերը, որոնք ներկայացված են ըստ Ջոնսոնների և Սալբերգի :

Դրական փոխկախվածություն

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից մեկը խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումն է: Սովորաբար ուսուցման ընթացքում խմբի անդամների միջև փոխկախվածություն կարող առաջանալ երեք տարբեր ձևերով է.

1. Մրցակցային.
2. Անհատական.
3. Համագործակցային

Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն

Բոլորը մասնակցում են և միշտ ներգրավված են խմբային աշխատանքում

Ընդհանուր առմամբ, ակտիվ ուսուցման, մասնավորապես, համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկն այն է, որ սովորողը հաշվետու է և անձնական պատասխանատվություն է կրում իր ուսուցման ընթացքի և արդյունքների համար կամ խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ իր ջանքերն անհրաժեշտ են խմբին՝ հաջողության և ընդհանուր նպատակներին հասնելու համար: Համագործակցային խմբերում անհատական հաշվետվությունը նշանակում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում խմբի ուսուցման արդյունքների համար և վստահաբար գիտի, որ իր ներդրումը կարևոր է խմբի հաջողությունն ապահովելու համար:

Սոցիալական հմտություններ

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է:

Համագործակցային ուսուցման հաջողության համար պահանջվում է փոքր խմբերում աշխատելու սոցիալական/համագործակցային հմտությունների զարգացում: Այդ հմտությունները ներառում են վարքագծային այնպիսի որակներ, ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը, ղեկավարման հմտությունները, հաղորդակցումը և միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելու և կոնֆլիկտներ լուծելու հմտությունները: Ուսուցիչները ընդունում են որոշումներ, ուսուցանում, շարունակաբար խրախուսում համագործակցային հատուկ վարքագծեր՝ ամրագրելով դրանք ակնկալիքներում, սահմանված դերերում և ապահովելով հետադարձ կապ: Աշակերտների մոտ համագործակցային հմտությունների ձևավորման նպատակով ուսուցչի տրամադրած Ժամանակն ու գործադրած ջանքերը կախված են առաջին հերթին աշակերտների նախնական պատրաստվածության աստիճանից:

Խմբային գործընթաց/մշակում

Խմբային գործընթացը (group processing), որպես համագործակցային ուսուցման տարր, խմբի անդամների կողմից իրենց խմբի հաջողությունների և արդյունավետ փոխհարաբերությունների, խմբային համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է: Խմբերը նկարագրում են խմբի անդամների օգտակար և ոչ օգտակար գործողությունները և որոշումներ կայացնում, թե որ վարքագիծը կամ գործողությունները պետք բարելավել, կամ զարգացնել: Ուսուցիչը խմբերին այդ նպատակով պետք է տրամադրի անհրաժեշտ ժամանակ և ընթացակարգեր: Նման քննարկումները հնարավորություն են ընձեռում ամրապնդելու խումբը՝ պահպանելով արդյունավետ փոխհարաբերությունները խմբի ներսում: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը, մղում են նրանց սոցիալական հմտությունների շարունակական կիրառման:

Թե՛ փոքր, թե՛ մեծ խմբերում խմբային գործընթացը ներառում է հետևյալ 4 բաղադրիչները.

1. Հետադարձ կապ. համոզվել, որ յուրաքանչյուր աշակերտ, յուրաքանչյուր խումբ և դասարան թիմային աշխատանքի և խմբային առաջադրանքի արդյունավետության վերաբերյալ ստանում է /և տալիս է/ հետադարձ կապ, ինչը թույլ է տալիս բարելավել երկուսն էլ: Նման հետադարձ կապը խրախուսում է կառուցողական գործողությունները, ինչը թիմային աշխատանքի հմտությունները բարելավելու նպատակ ունի: Այս դեպքում ընդլայնվում է աշակերտների գործունեության շրջանակը, բարձրանում է նրանց ինքնարժևորումը և նրանք ավելի են ակտիվանում հետագա խմբային աշխատանքներում:

2. Անդրադարձ/քննարկում. համոզվել, որ աշակերտները վերլուծում և մտորում են իրենց ստացած հետադարձ կապի շուրջ: Սովորելու լավագույն ձևը՝ աշխատանքը պարբերաբար վերլուծելն է, առաջխաղացումներն առանձնացնելը, դժվարությունները վերհանելը, անհաջողություններին անդրադառնալը: Այս նպատակին է ծառայում անդրադարձը: Անդրադարձը կազմակերպված և գիտակցաբար ուղղորդված գործընթաց է, որի ընթացքում խմբի անդամները քննարկում են՝ որքանով է նրանց հաջողվել հասնել առաջադրված նպատակին և ձևավորել խմբային դրական փոխկախվածություն:

3. Բարելավման նպատակներ/պլանավորման բարելավում. օգնել խմբի անդամներին և խմբերին իրենց առջև դնել աշխատանքի որակը բարելավելու նպատակներ: Երբ արդեն իրագործված են խմբային գործընթացի նախորդ երկու մակարդակները՝ դիտարկված և վերլուծված են տվյալները, ապահովված է դրական հետադարձ կապն ու անդրադարձը, խմբերը պատրաստ են իրենց առջև բարելավման նպատակներ դնել:

Փոխներգործուն կառուցվածք ունեցող առաջադրանք

Ընտրություն կատարելն ու որոշում ընդունելը պահանջում են հմտություններ, որոնք պետք է շարունակաբար ուսուցանվեն:

Համագործակցային ուսուցման վերը նկարագրված հինգ տարրերը գործնականում կիրառվում են առաջադրանքի կատարման ժամանակ, որի ընթացքում սովորողները կարիք ունեն համագործակցելու: Արդյունավետ համագործակցային աշխատանքը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առաջադրանքը, որի վրա աշխատում է խումբը, տրված է այնպես, որ այն կատարելու համար պահանջվում է թիմային աշխատանք: Ահա այս տիպի առաջադրանքները Պասի Սալբերգը անվանում է փոխներգործուն կառուցվածք ունեցող առաջադրանք և այն դիտարկում՝ որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր : Ստորև այն ներկայացվում է ըստ Պասի Սալբերգի: [Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ. և ուրիշ. Համագործակցային ուսուցում:Ձեռնարկ.-Եր.:Անտարես, 2006:]

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Խառը համագործակցության խմբային մեթոդը իմ մասնագիտական գործունեության մեջ հաճախ կիրառվող մեթոդներից է, քանի որ այս մեթոդի միջոցով աշակերտներըմոտիվացվում են դասին: Այս մեթոդի միջոցով երեխաների մոտ զարգանում է ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, ինքնավստահությունը և համագործակցելու հմտությունը: Այս մեթոդը դասը դարձնում է դյուրընկալելի սովորողների համար: Այն մղում է աշակերտներին ավելի լավ սովորելու: Բոլոր աշակերտների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որում նրանք կարողանում են արտահայտել իրենց ուժեղ կողմերը: Որոշ մասնագետներ մտահոգություն են հայտնում, որ համագործակցային ուսուցման պարագայում դասարաններում ընդունակ աշակերտները պարտավորված են մշտապես սովորեցնելու մյուսներին, ինչի պատճառով նրանց առաջընթացը դանդաղում է: Սակայն այս կարծիքը ընդունելի չէ, քանի որ, նախ, մարդը ամենաշատը սովորում է սովորեցնելիս: Այսինքն, մյուսներին սովորեցնելով ընդունակ աշակերտը ավելի լավ է սովորում:

Ներկայացնում եմ իմ վարած դասերից մեկը, որտեղ կիրառվել է խառը համագործակցության խմբային մեթոդը:

Դասը իրականացվում է երկկոմպլեկտ դասարանում՝ 7-րդ և 9-րդ դասարաններում: Կազմել եմ դասապլան և նպատակ եմ դրել.

- Ապահովել ներգրավվածությունը խառը խմբերով աշխատելիս
- Ցույց տալ խառը խմերով աշխատելու կարողությունը

Դասի թեման է «Բնակչություն»: Դասարանը բաժանվում է երկու խմբի՝ ըստ դասարանների: Աշակերտները դիտում են տեսանյութ «Բնակչություն» թեմայով, իրենց մոտ գրառումներ են կատարում: Առաջին խմբի մասնակիցները յոթերորդ դասարանի աշակերտներն էին, որոնց հանձնարարել եմ ներկայացնել աշխարհի բնակչությունը, թիվը, շարժը, վերարտադրությունը, կազմը և տարաբնակցեման տեսակները:

Երկրորդ խմբի մասնակիցները իններորդ դասարանի աշակերտներն էին: Նրանց

հանձնարարել եմ ներկայցնել ՀՀ բնակչության թվի բնական և մեխանիկական շարժերը, կազմը, տեղաբաշխումը և տարաբնակեցումը: Տվեցի 10 րոպե ժամանակ աշխատելու համար:

Երկրորդ խմբի աշակերտները ավելի ակտիվ էին և համագործակցությունը ակնառու էր: Հարցերը քննարկում էին միմյանց հետ: Երկրորդ խմբի աշակերտները ակնհայտորեն օգնում էին յոթերորդ դասարանի աշակերտներին, բայց և այնպես նկատելի էր յոթերորդ դասարանի աշակերտների ներգրավվածությունը:

Ուսուցիչը ժամանակը լրանալուց հետո տվեց այն հարցերը, որոնք քննարկում են խմբերը: Հարցերին պատասխանեցին խմբի կողմից ընտրված ավագները: Հարցադրումներից հետո տրվում է հայտորոշիչթեստ, որի նպատակն է պարզել, թե որքանով յուրացրեցին թեման: Ուսուցիչը հանձնարարում է նոր դաս և տնային առաջադրանք:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել եմ այն եզրակացության, որ համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցումը այն միջոցն է, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների, կարողությունների, բնավորության առանձնահատկությունների և տարբերությունների նկատմամբ: Համագործակցային ուսուցումը փորձում է լուծել նաև սովորողների հնարավորինս համաչափ զարգացման խնդիրը (մասնավորապես, համագործակցային ուսուցումը խրախուսում է միմյանց օգնելու, աջակցելու որակները), ինչը շատ կարևոր է ժողովրդավարական հասարակությունում մեծ վտանգներ պարունակող բևեռացումից խուսափելու առումով:

Աշխարհագրություն առարկայի շրջանակներում «Բնակչություն» թեման ուսումնասիրելու ժամանակ նպատակ եմ դրել համագործակցության մեթոդի միջոցով հասնել ցանկալի վերջնարդյունքի: Այսինքն՝ աշակերտները համագործակցելով իրար հետ ներգրավվում են դասապրոցեսին և միաժամանակ մոտիվացվում են: Համագործակցության մեթոդի միջոցով աշակերտները գիտելիքների փոխանակում են անում: Դասընթացի ընթացքում ուսուցչի և աշակերտների միջև ձևավորվում է փոխադարձ հարգանքի, վարվելաձևի և դասընթացի կառավարման գործընթաց: Ուսուցիչ-աշակերտ ընդունման տեսակետից դասընթացում առկա են տարբեր խմբեր՝ ինչպես նաև ազգություններ, ներգրավվում են դասին և համագործակցային դաշտ ստեղծվում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.ԱրզումանյանՍ.https://library.anau.am/images/stories/grqer/hasarak/mankavarjutyun.pdf[6],

2. Ամիրջանյան ՅՈՒ. Ա., Մանկավարժություն (Ուսումնական ձեռնարկ), Երևան2005:
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ. և ուրիշ. Համագործակցային ուսուցում:Ձեռնարկ.-Եր.:Անտարես, 2006:
4. (Ильин Е.П., Мотивация и мотивы, С-Пб.: Питер, 2000, էջ 89-90)
5. (Ричард М. Райан, Теория самодетерминации, Нью-Йорк, 2017, էջ 18)
6. https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus/highlights/pupils-can-and-should- be-age.htm
7. https://elensanti.ru/hy/training/sovremennye-problemy-nauki-i-obrazovaniya- motivaciya-studentov-k-obucheniyu-i-ee/